

ներուսն գըլխն շատ “գիւրկներ կը դնեն”, պիտի ըսէինք:

ԳՄՇԽԻ: Հաստ եւ ամուր կազմ ունեցողին կ'ըսուի, կրնայ “դէմ” (յորմէ “գիւմացիուն”), արմատէն ըլլալ: Կը հնչուի գըմըշխի:

ԳՄԳԳՈՒՌ: “Չոր”, բառին հետ կը գործածուի միայն, եւ շատ նիհար անձի մասին խօսելով կ'ըսեն “չոր դագգուռ”, է: Երկու քիւն մէկը սաստկական է կարծեմ (ինչպէս կոչել փոխան կոչել-ի), եւ բուն բառը “դագուռ”, ըլլալու է, ու “դագուռ”, սկզբնապէս պէտք է նշանակէ փայտէ կամ քարէ գործի մը, շինուած մը, տախտակ մը:

ՏԱՓՈՒՌ: Այս բառը իբրեւ յատուկ անուն տեղույ կը գործածուի Ախայ քաղաքին շատ մօտիկ սարահարթի վայր մը նշանակելու: Ինձ կը թուի թէ այս բառը բլուրի կամ բարձունքի տեսակ մը ցոյց կու տայ, այսինքն բարձունք մը կամ բլուր մը որուն գագաթը տափարակ է եւ ապառաժ:

ՃԱԹԱԿ: Մէկուն ‘ճաթակը ինչալ’, կամ “ձգել”, այսինքն ձեռքը կամ ձանքը: “Ահ”, վերջագիր մասնիկով շինուած բառ մը ըլլալ կը թուի: Կրնայ *թաթ-ակ-ի լծորդ ձայն մը ըլլալ:

ՀԹԱՒ: “Կամաց երթա՛ս” կամկար կ'ըսեն, թէք թէք երթա՛ս՝ շնորհ կ'ըսեն, խօսքին մէջ այդ բառին միտքը երեւան կու գայ իբր “չափազանց աճապարող”, հետեւապէս աճապարանքին մէջ սխալող մէկը: Կրնայ ‘շուտ’, ով եւ շտապ բառերուն հետ կապակցութիւն մը ունենալ:

ՋՌԻՒԻ: “Ջուրի՛մը տալ”, բացատրութիւնը կայ, որ կը նշանակէ գրգռել, գրգռել, բորբոքեցնել: Հաւանքէն հետքը կամ կրակաւանք խառնելու գործիք մըն է եղած “ջուրի՛մ”, ը: ‘Խմանք’, ի տեսակ մը:

ՋԼՌՆՈՑ: Տան մը այն մասը ուր ոեւէ բան կը խոնեն իբրեւ ամբարի մը մէջ: Այն գաղափարը կու տայ թէ տեղը նեղ է եւ բռնի ներս կը կռնէ այն բաները որ օր մը կրնան բռնի մը գալ:

ԱՌԱԳՈՒՑ ԻՅՆԻԼ: Երբ հիւանդ մը շատ վատած ու փոխուած տեսնեն, “առապ ուզ (կամ երբեմն յ կամ հ ձայնով՝ յառապ ուզ) ինկեր է, կ'ըսեն:

(ՀԻՐ-ՆԻԼԻ)

Մ. Մ. ԳԱՐՈՒԷԼԵԱՆ

Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Խ Ն

Գեղյ. Հ. Թաղէոս Վ. Թոռնեան Թաղակիր Աքքայ եւ Ըսոհ. Աթոռակալ Միաբանութեանս՝ Սեպտեմբեր 18ին 1908 հեռագրած էր Ի Հոռմ առ Ս. Բաճանայապետն Պիոս Ժ. ղնելով յոռո մեծապայծառ զանոյիցն՝ քովանդակ Միւթարեան Միաբանութեանս անկեղծ եւ խոնարհագոյն խնդակցութիւնն եւ ջերմութեմը՝ քարեմաղթութիւններն՝ առթիւ իւր քարենշան ոսկեղէն Յոգելեանին: — Ամսոյս 21ին վերոյիշեալ Ըսոհ. Աթոռակալն ընդունեցաւ Վսեմի. Կարդինալ Մերրի տէլ Վալէն յաջորդ մեծարեալ հեռագիրը.

*Santo Padre gradito vivamente
espressioni filiali auguri, benedice di
cuore lei intera comunità.*

Card. MERRY DEL VAL.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պիոս Ժ. Ս. Բաճանայապետին քաճանայութեան 50ամեայ Յոգելեանը. 257:

ՄԱՏԵՆԱԳՐԱՅԱՆ — Տիմոթէոս կուգ հայ մատնագրութեան մէջ. 261: — Տուցակ ձեռագրաց Թաւրիզի. 266: — Միւթար Գօշ Դատաստանագիրը եւ Հայոց հին քաղաքացիական իրաւունքը. 270:

ԼԵՋՈՒՆԱՐԱՆԱԿԱՆ — Ստուգաբանական հետազոտութիւնը. 274: — Ալմայ զաւառաքարառը. 279: Ժանթոթութիւն. 288:



ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ԵՒ ՊԱՏԱՄԱՆԱՑՈՒ ԽՄԱՐԱԿԻՐ

Հ. ԱՌԱՊԱՆԵԼ Վ. ՊԱՐԱՆԶ

ՎԻԵՆՆԱ, ՄԻԻԹԱՐԵԱՆ ՏԳԱՐԱՆ